ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք.Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 112
05 մայիսի 2018 թվականի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 20-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 20-ի թիվ 27 որոշումը՝ *որոշում եմ*

1 Անի համայնքապետարանի 2018 թվականի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով **ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ – Ա. Գևորգյան – Անի համայնքապետ

Անդամներ – Գ. Գրիգորյան – գլխավոր մասնագետի ժ/պ

Գ. Բրուտյան- <<Անի կոմունալ տնտեսություն>> բյուջետային հիմնարկի բրիգադիր

Ս. Անթանեսյան – առաջատար մասնագետի ժ/պ

2 Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Լիլիթ Նիկոլյանին:

3 Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2018 թվականի մայիսի 7-ին, ժամը 12:00-ին, Անի համայնքապետարանում, ք. Մարալիկ, Մաղաթյան 1 հասցեով:

4 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2018 թ. Մայիսի 5
Անի համայնք